

**«ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԸ ԵՎ ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»
ԹԵՄԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝
ՆՎԻՐՎԱԾ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ՄԵՆԴՅԱՆ 175-ԱՄՅԱԿԻՆ**

Նոյեմբերի 13-ին Հայաստանի գրողների միության նիստերի դահլիճում բացվեց հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ-գեյ-մեկրատ Խաչատուր Աբովյանի ծննդյան 175-ամյակին նվիրված համամիութենական գիտական կոնֆերանս՝ «Խաչատուր Աբովյանը և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը» թեմայով: Այն հրավիրել էին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, Հայաստանի գրողների միությունը և Երևանի պետական համալսարանը: Կոնֆերանսի լիազմար նիստին ներկա էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաբյանը:

Կոնֆերանսը ներառական խոսքով բացեց Հայաստանի գրողների միության վարչության նախագահ Վ. Պետրոսյանը: Առաջին անգամ Աբովյանը, սաաց նա, 1829 թ. սեպտեմբերի 27-ին Արարատի բիրական բարձունքից նայեց-տեսավ ողջ Հայաստանը: Դրանից հետո կանցնի ևս հինգ-վեց տարի՝ դորպատյան ուսումնառության տարիները, և գրաբարի, ուսանողների, պարսկերենի, թուրքերենի, քրդերենի իմացությունը կգումարվեն գերմաներենը, անգլերենը, ֆրանսերենը, լատիներենը, համաշխարհային մշակույթի խիտ նստվածքը, և նա հայրենիք կվերադառնա՝ հուլիսբուրգ, Երազներով ու ժրագրերով լեցուն: Քսանհինգ տարեկանում դառնալով իր ժողովրդի ամենափայլուն մտավորականը՝ եվրոպական շափուկչուով, նա, բնականաբար, առաջ անցավ իր ժամանակից Ռուս գրողի բերնությանը՝ մարդկության հանճարեղ գավակների ընտանիքին պատկանող և: Աբովյանը մեր ժողովրդի կենսագրության երևի թե ամենաողբերգական անհատն է: Դեռ պատանեկությունից, շարունակեց Վ. Պետրոսյանը, նա սահմանել էր իր կյանքի իմաստը՝ ապրել իր ազգի համար: Խ. Աբովյանը եղավ մեր նոր գրականության սկզբնավորողը, նա դրեց հայ նոր դպրոցի և մանկավարժության հիմնաքարերը, նրանով գրականություն մտավ ժողովուրդը՝ իբրև լիբրավ հերոս և ընթերցող. նա եղավ մարգարե, ուսուցիչ և դրոշմ: Խ. Աբովյանը հայության հայաբարեբաժ գերագույն ճշմարտության՝ հավերժ Ռուսաստանի հետ սրբազան բանաձևի լրարբեր 12—6

պատգամախոսն էր: «Մեր փրկությունը միայն հյուսիսից՝ Ռուսաստանից է լինելու» — այս ճշմարտությունն արդեն երկու հարյուր տարի խըմորվում էր իր ժողովրդի մեջ, այս բանաձևն էին որդեգրել իր ժողովրդի բոլոր երևելի գեյմերը՝ Դավիթ Բեկից մինչև Ներսես Աշտարակեցի: Եվ ահա, եկավ այդ փրկությունը Արևելյան Հայաստանի համար, ծնվեց գալիքի հույսը իբրև մանուկ, և Աբովյանը, որ գինվորն էր այդ բախտորոշ կովի, դարձավ այս հույսի մարգարեն:

Աբովյանի եղբրական վախճանից անցել է արդեն 135 տարի, այնուհետև սաաց Վ. Պետրոսյանը, սակայն մեր ժողովրդի գիտակցության մեջ արթնում են ու պիտի արթնում միան նրա դասերը: Նա գիտեր, որ որևէ ազգի շարունակվելն ու զորանալը հնարավոր է միմիայն սեփական պետության հովանու տակ: Հայ ժողովրդի համար՝ այդ պետությունը կարող է գոյատևել, ծաղկել ու զորանալ Ռուսաստանի հզոր հովանավորությամբ, ուրեմն հարկ է ամեն բան անել, որ ռուսների բարի ոտքը մեր աշխարհիցը չըկտրի: Աբովյանի այս մեծ երազները վաղուց իրականություն են դարձել: Մեր վերածնված ժողովուրդը պետական հուշակեց իր լեզուն, այն հնչում է ամենուր, այդ լեզվով ստեղծվել, ստեղծվում են և կստեղծվեն մշակույթի բարձրարժեք նոր գործեր: Դրա հետ մեկտեղ մեր ժողովուրդը անխզելի եղբայրությամբ կապված է իր մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ և իբրև երկրորդ մայրենին՝ սովորում է և գիտի ուսման մեծաքանակ լեզուն, որ նրա համար անգլանահատելի պատուհան է՝ դեպի համաշխարհային մշակույթը:

Վերջում Վ. Պետրոսյանը շերտորեն ողջունեց եղբայրական հանրապետություններից և: Աբովյանի հոբելյանին մասնակցելու համար ժամանած գրչակից ընկերներին ու հյուրերին:

«Վերջ Հայաստանի վերջի ճակատագիրը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական դիտությունների դոկտոր Պ. Հակոբյանը: Նա առաջ, որ «Վերջ Հայաստանի վերջը գրվել և իր վերջնական տեսքը ստացել է ստեղծագործական բարդ ու տանջալից աշխատանքի շնորհիվ՝ Նը-

ման երկ ստեղծելու միտքը Արտվյանի մեջ հր-
շակել է դեռևս 20-ական թվականների հայրե-
նասիրական առաջին ծրագրերը կազմելու ըն-
թացքում, իսկ անուհետև՝ 1826—1828 թվա-
կանների ուսուցարական պատերազմի իրա-
դարձությունների ժամանակ, որի ականատեսն
ու մասնակիցն էր։ Իր նվիրական մտադրության
իրականացմանը նա ձեռնամուխ է լինում
1841 թ. փետրվարին։ Մոտավորապես 1845 թ.
վերջնականապես որոշվում է վեպի անվանումը,
որը 1858 թ. հրապարակվում է անուն՝ «Գրքով՝
գրաքննչական զգալի կրճատումներով»։

Բանասիրական գիտությունների դոկտոր
Բ. Արվիլանի (Թրիլիսի) ղեկուցման վերնա-
գիրն էր՝ «Խաչատուր Արտվյանը և Վրաստանը»։
Հայ նշանավոր գրողն ու լուսավորիչն իր կյան-
քի ու գործունեության շատ տարիներ անցկաց-
րել է Վրաստանում, մասնավորապես Թիֆլի-
սում, սաաց նա 1824—1828 թթ. և Արտվյանը
սովորել է Թիֆլիսի նորարաց ներսիսյան ղեպ-
րոցում, իսկ Դորպատի համալսարանն ավար-
տելուց հետո 1837—1838 թթ. Թիֆլիսում բա-
ցում է մասնավոր գիշերօթիկ դպրոց, որտեղ
սովորել են վրաց հայտնի գրող և հասարա-
կական գործիչ, «Յիսկարի» հանդեսի խմբագիր
Իվանն Կերեսելիձեն, իլյա ու Գրիգորի Բարա-
թաշվիլիները և ուրիշներ։ և Արտվյանի գրա-
կան ժառանգության մեջ, շարունակեց ղեկու-
ցողը, զգալի տեղ են գրավում վրացական թե-
ման և վրացական միջավայրը։ Նրա գրչին է
պատկանում «Թանկագին բարեկամ» անալարտ
հոդվածը (1836 թ.), «Առ հանդես ի լեռն
Մթա-ծմինդա» բանաստեղծությունը (1842 թ.)-
նա մի քանի գրվածք ունի Աղա Մահմեդ խանի
հրոսակախմբերի կողմից Թիֆլիսի ավերման մա-
սին։ Թիֆլիսում է Արտվյանը ստեղծել նաև սո-
ցիալական սուր իմաստ ունեցող «Շաղարափե-
շեն» երգիծական պոեմը, որտեղ ղեկավարվեց
կան մեծ ուժով պատկերել է հին Թիֆլիսի կեն-
ցազային տեսարանները։ «Վերջ 20-ամյա տարի»
վեպում նույնպես տեղեկություններ կան Վրաս-
տանի մասին։ Դրանց վերլուծությունը որոշակի
հետաքրքրություն է ներկայացնում վրաց և հայ
ժողովուրդների պատմական ու գրական համա-
գործակցության տեսանկյունից։ Վերջում Բ. Արվի-
լանին նշեց, որ հայ մեծ գրողի ստեղծագործու-
թյան մեջ ընդհանրապես Վրաստանի, վրաց ժո-
ղովրդի թեման, նրա կենցաղն ու պատմությունը
զգալի տեղ են գրավում և կասկածից վեր է, որ
նրա ստեղծագործությունը հարստացնում և ընդ-
լայնում է հայ-վրացական գրական դարավոր
կապերի պատմությունը։

Ուկրաինայի գրողների միության կիևի բա-
ժանմունքի քարտուղար Վ. Կոշեչկին «և Արտվ-
յանը և Ուկրաինան» ղեկուցման մեջ սաաց, որ

թեև Հայաստանի մեծ ղավակը երբեք Ուկրաի-
նայում չի եղել, բայց այնուամենայնիվ նա իր
ողջ կյանքում դեպի այնտեղ է քայլել ու հասել
է միայն մեր սոցիալիստական դարաշրջանում,
կանգնելով իր հոգևոր հավատակից եղբայր Տա-
րաս Շենկելյուի կողքին՝ ձեռք բերելով անմա-
հուություն։ Նա նշեց, որ Արտվյանը և Շենկելյու
հիմնարար գրվածքներով ղրեցին իրենց հարա-
զատ գրականությունների հիմքը։ Արտվյանը և
Վորդարը գրականությունը համարում էին իրենց
ժողովուրդների լուսավորման, արդիականության
ստեղծարար գաղափարներին նրանց հաղորդակց-
ման հզոր միջոց։

«Արտվյանի կերպարը Ջարենցի և Բակուն-
ցի ստեղծագործության մեջ» թեմայով ղեկուցու-
մով հանդես եկավ բանասիրական գիտություն-
ների դոկտոր Ս. Աղաբաբյանը։ և Արտվյանի
կյանքի և սխրանքի սյուժեով, մասնավորապես
սաաց նա, գրվել են բազմաթիվ բանաստեղծու-
թյուններ, պոեմներ, պիեսներ, արձակ պատում-
ներ, որոնցից իրեն ղեկավարվեցապես գլուխգոր-
ծոցներ առանձնանում են երկու գրվածք՝ մեկ
Ակսել Բակունցի «Խաչատուր Արտվյան» անա-
լարտ վեպը, մեկ էլ Եղիշե Ջարենցի «Դեպի
լյառն Մասիս» պոեմը։ Անուհետև ղեկուցողը
գրականագիտական նուրբ դիտարկումներով
ցույց տվեց, որ Ջարենցն ու Բակունցը անմահ
հավանականությամբ միացյալ շանքերով մշա-
կեցին Արտվյանի երկության գաղափարապատկերը,
որով էլ բացատրվում է երկու գրվածքներն ի-
րար կապող հարազատության շունչը։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս.
Հալիլը (Բաբու) «Արտվյանը ադրբեջանական
գրականագիտության մեջ» վերնագրով ղեկու-
ցումում նշեց, որ ժողովուրդների բարեկամու-
թյան շատագույն և Արտվյանը միշտ գտնվում է
ադրբեջանցի գիտնականների ուշադրության
կենտրոնում։ Նրա մասին գրվել են մենագրու-
թյուններ, հոդվածներ, նրան են նվիրվել Մ. Ֆ.
Ախունդովի վերաբերյալ ուսումնասիրություն-
ների, XIX դարի առաջին կեսի ադրբեջանական
գրականության պատմության առանձին էջեր։
Ադրբեջանցի գիտնականները լուսաբանում են
ևս Արտվյանի և Մ. Ախունդովի բարեկամական,
ստեղծագործական կապերը, հայ լուսավորիչ
գրողի հետաքրքրությունը ադրբեջանական մշա-
կության, մասնավորապես լեզվի ու գրականու-
թյան նկատմամբ, ադրբեջանական մոտիվների
արտացոլումը Արտվյանի ստեղծագործություն-
ներում, նրա և ադրբեջանցի լուսավորիչների
ստեղծագործության ու աշխարհայացքի լուսա-
վորական ընդհանրության հարցերը։

«Վերջ Հայաստանի» վեպի լիովին թարգ-
մանելու իր փորձի մասին պատմեց Ռ. Ցալա-

ուսկայտուն (Վիլյուս)։ Խ. Աբովյանի վեպի թարգմանությունը, նշեց նա, մեծ ու քրտնաշան աշխատանք պահանջեց։ ԶԷՊՐ հարկավոր էր ոչ միայն ճիշտ հաղորդել հեղինակի գաղափարները, այլև այդ հրաշալի ստեղծագործության կերպարների ու լեզվի ողջ գունազեղությունը։ Վերջում նա նվեր մատուցեց «Վերք Հայաստանի» վեպը, որն իր թարգմանությամբ լույս է տեսել նոր հրատարակությամբ։

Այնուհետև կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց ըստ մասնաճյուղերի։ Հինգ մասնաճյուղերում լսվեց երեսուրեք ավելի զեկուցում և հաղորդում, որոնցով հանդես եկան Երեւանի և միութայն այլ քաղաքների գիտնականները։ Ելույթ ունեցողները խոսեցին հայ մեծ դրողի և լուսավորչի կյանքի ու գործունեության մասին, լուսարանեցին նրա գրական հարուստ ժառանգության հարցերը, Խ. Աբովյանի ներդրումը մեր երկրի ժողովուրդների գրականությունների ինտերնացիոնալ կապերի հաստատման ու զարգացման գործում։

Կոնֆերանսի վերջին լիազումար նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 15-ին ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի նիստերի դահլիճում։ Բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Թավրազյանը զեկուցում կարդաց Խ. Աբովյանի գրական-քննադատական հայացքները թեմայով։ Նա նշեց, որ նորարար, մտածող ու գեղազետ Խ. Աբովյանը շոշափել է նաև գրաքննադատական բնույթի այնպիսի հարցեր, որոնց լուծումը անդրադարձել է գրականության հետագա զարգացման վրա։ Կրոնական գրականության, միաստիկայի դեմ մղելով հետեւողական պայքար, նա առաջ քաշեց գրականության բովանդակությունն ու լեզուն ժողովրդի իրական կյանքին և կենդանի լեզվին մոտեցնելու, ողջ ժողովրդի հոգևոր և գեղադիտական պահանջմունքները բավարարելու խնդիրը։

«Խաչատուր Աբովյանը Բաֆֆու գնահատմամբ» վերնագրով զեկուցումով հանդես եկավ Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սալիբյանը։ Նա մասնավորապես նշեց, որ Բաֆֆին իր հրապարակախոսական, քննադատական հոդվածներում և ուսումնասիրություններում հաճախ էր դիմում հայ գրականության և XIX դարի հասարակական մտքի զարգացման ուղիների քննադատական վերլուծությունը, ազգային ու գրական գործիչների բնութագրմանը, որոնք այսօր էլ պահպանում են իրենց ճանաչողական արժեքը։

Բանասիրական գիտությունների ֆեկնաժու Վ. Վավրեեն (Ռիգա) «Խաչատուր Աբովյանը և լատիշական գրականությունը» վերնագրով զեկուցման մեջ ասաց, որ գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում Խ. Աբովյանի և «Երիտասարդ լատիշների» գործունեության և գեղարվեստական ստեղծագործության տիպականական նմանությունները։

Ք. Հիլերիկուսի և Ս. Օլեֆսի (Տարտու) զեկուցումը նվիրված էր Խ. Աբովյանը և Տարտուի մշակութային կյանքը 1830-ական թվականներին» թեմային։ Խ. Աբովյանը Տարտուում անցկացրել է հինգ տարուց ավելի՝ 1830 թ. սեպտեմբերի 3-ից մինչև 1836 թ. հունվարի 14-ը։ Նրա օրագրերը, նշվեց զեկուցման մեջ, վկայում են նրա սերտ կապերը համալսարանի առաջադեմ պրոֆեսորների, «Դուրպատի ուսանողների միություն» դեմոկրատական կազմակերպության հետ, որը արգելվել էր 1833 թվականին։

Կոնֆերանսը բացահայտեց ու ընդհանրացրեց հայ մեծ լուսավորիչ դրողի կյանքի և ստեղծագործական ժառանգության հարցերը ու մեծապես նպաստեց մեր երկրի ժողովուրդների գրական ինտերնացիոնալ կապերի հետագա ամրապնդմանը։